



«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0037, Ազատության պ. 1/21-1
Հեռ.՝ +374 60 701 707, +374 77 010 863
info@ayb.am
www.ayb.am

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Այբ» կրթական հիմնադրամը («Հիմնադրամ») քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ ամատրային կազմակերպություն է, որը համախմբում է այն մարդկանց հնարավորությունները, ովքեր գիտակցում են յուրաքանչյուրի կյանքում կրթության կարևորությունը և կամենում ստեղծել որակյալ ու բազմակողմանի կրթական միջավայր:
- 1.2. Հիմնադրամը գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում դրանց օրենսդրությանը համապատասխան:
- 1.4. Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 11/11:
- 1.5. Հիմնադրամի պաշտոնական լեզուներն են հայերենը, ռուսերենը և անգլերենը:
- 1.6. Հիմնադրամի անվանումն է՝
 - հայերեն՝ «Այբ» կրթական հիմնադրամ,
 - ռուսերեն՝ Образовательный фонд «Айб»,
 - անգլերեն՝ “Ayb” Educational Foundation,
- 1.7. Հիմնադրամի հիմնադիրներն են՝
 - ՀՀ քաղաքացի Աշոտ Ասլանյան (անձնագիր թիվ՝ AA0209301, տրված 03.05.1995 թ, 004-ի կողմից, բնակվող՝ ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան 39բ, բն. 32),
 - ՌԴ քաղաքացի Դավիթ Փախչանյան (անձնագիր թիվ՝ 45 03 881236, տրված 16.08.2002 թ, 772-083-ի կողմից, բնակվող՝ ՌԴ, ք. Մոսկվա, Լյուբլինսկայա 169, բն. 35),
 - ՌԴ քաղաքացի Արամ Փախչանյան (անձնագիր թիվ՝ 45 03 554121, տրված 05.09.2002 թ, 772-083-ի կողմից, բնակվող՝ ՌԴ, ք. Մոսկվա, Նովոսպասկի Նրբ. 3, կորպ. 1, բն. 88),
 - ՌԴ քաղաքացի Կարո Սարգսյան (անձնագիր թիվ՝ 45 00 051213, տրված 01.09.2000 թ, 772-063-ի կողմից, բնակվող՝ ՌԴ, ք. Մոսկվա, Նով. Բաշիլովկա 16, բն. 15),

- ՀՀ քաղաքացի Կարեն Մուսաեյան (անձնագիր թիվ՝ AG0536191, տրված 17.08.2005 թ, 001-ի կողմից, բնակվող՝ ք. Երևան, Դեմիրճյան շ. 40, բն. 137),
- ՌԴ քաղաքացի Դավիթ Յան (անձնագիր թիվ՝ 45 04 897527, տրված 29.01.2003 թ, 773-046-ի կողմից, բնակվող՝ ՌԴ, ք.Մոսկվա, Բ. Կոզլովսկի Նրբ. 10, շին. 1, բն. 5),
- ՀՀ քաղաքացի Մաթևոս Արամյան (անձնագիր թիվ՝ AG0688670, տրված 12.04.2006 թ, 011-ի կողմից, բնակվող՝ ՀՀ, ք. Երևան, Կողբացու 83, բն. 4),
- «Օկտագոն» ՍՊԸ (պետ. գրանցման համար՝ 273.110.04386, պետ. գրանցման վկայականի համար՝ 03 Ա 073845, պետ. գրանցման ամսաթիվ՝ 25 հոկտեմբերի 2006 թ., ՀՀ, ք. Երևան, Կոյունի 19ա), տնօրեն՝ Դավիթ Սահակյան:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի նպատակներն են՝

- բարձրորակ, բազմաբևեռ, օրինակելի կրթական միջավայր ստեղծել Հայաստանում,
- նպաստել Հայաստանի կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը,
- աջակցել դպրոցականներին և երիտասարդներին ուսման հարցում և իրենց կարիերայի զարգացման գործում,
- կրթական ոլորտի կազմակերպությունների աշխատակիցների օժանդակումը և նրանց շահերի պաշտպանումը:

2.2. Հիմնադրամի խնդիրներն են՝

- կրթության գերակայությունը գիտակցող մարդկանց միջոցների հավաքագրումը և կառավարումը հիմնադրամի նպատակների իրականացման ուղղությամբ,
- կրթական ոլորտի զարգացմանը նպաստող, կրթական ոլորտում կառավարում իրականացնող, կրթական ոլորտի աշխատակիցներին օժանդակող, դպրոցականներին և երիտասարդներին աջակցող կազմակերպությունների և անհատների խրախուսելը և/կամ կառավարելը,
- կրթական հաստատությունների հիմնում ու կառուցում,
- կրթական ոլորտում ծրագրերի մշակում և իրականացում, տարբեր նախաձեռնությունների աջակցում,
- կրթական ոլորտում գործող կազմակերպությունների (ամևտրային եւ ոչ ամևտրային) ստեղծում և/կամ շահագործում:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերն են՝

- Դպրոցականները և երիտասարդները,
- Կրթական ոլորտի հաստատությունները և դրանց աշխատակիցները,

- Կրթական ոլորտի զարգացմանը նպաստող, կրթական ոլորտի աշխատակիցներին օժանդակող, դպրոցականներին և երիտասարդներին աջակցող կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները և դրանց աշխատակիցները:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հիմնադրամի գործունեությունն անժամկետ է:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրամը՝

- 5.1.** ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ հիմնադրամի պետական գրանցման պահից.
- 5.2.** ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները.
- 5.3.** ունի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան իրավունքներ և այդ գործունեության հետ կապված պարտականություններ.
- 5.4.** որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 5.5.** Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
 - 5.5.1. հիմնադիրների ներդրումը,
 - 5.5.2. ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
 - 5.5.3. դրամական մուտքերը պետական բյուջեից,
 - 5.5.4. դրամաշնորհները,
 - 5.5.5. Հիմնադրամի, նրա ստեղծած կամ նրա մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
 - 5.5.6. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, կրթական և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),
 - 5.5.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:
- 5.6.** Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր հանդիսացող միջոցների տրամադրումը Հիմնադրամին ենթակա է Հիմնադրամի ընդունմանը կամ մերժմանը:

- 5.7. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:
- 5.8. Հիմնադրամը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
- 5.9. ունի ինքնուրույն հաշվեկշիռ,
- 5.10. կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
- 5.11. իրավունք ունի ՀՀ օրենքով չարգելված բոլոր ձևերով ձեռք բերելու գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետելու և տնօրինելու դրանք և դրանցից ստացված եկամուտները,
- 5.12. իրավունք ունի ինքնուրույն կազմավորելու իր ֆինանսական միջոցները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ստանալու և տալու փոխառություններ ու դրամաշնորհներ, ձեռք բերելու և իրացնելու արժեթղթեր, գույքային և ոչ գույքային իրավունք,
- 5.13. իրավունք ունի կնքելու պայմանագրեր ՀՀ-ում և արտասահմանում,
- 5.14. իրավունք ունի ինքնուրույն ընտրելու արտաքին գործունեության վարման կարգը,
- 5.15. ունի օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ,
- 5.16. քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում ու իրականացնում ինքնուրույն և ելնելով իր շահերից,
- 5.17. իր իրավունքների սահմանափակման կարող է ենթարկվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:
- 5.18. Հիմնադրամն ունի իր անվանումը հայերեն և անգլերեն լեզուներով պարունակող կլոր կնիք, կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացնող այլ միջոցներ:
- 5.19. Հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեությունը
- 5.19.1. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:
- 5.19.2. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել ինքնուրույն, այդ նպատակով ստեղծելով տնտեսական ընկերություններ կամ լինելով դրանց մասնակից:
- 5.19.3. Հիմնադրամն իրավունք ունի ինքնուրույն զբաղվելու միայն իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- հոգաբարձուների խորհուրդը,
- գործադիր տնօրենը:

6.1. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

6.1.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (ՀԽ) բաղկացած է 7 (յոթ) անդամից, որոնք ընտրվում են սույն կանոնադրության սահմանած երեք դասային խմբերից: ՀԽ անդամներն իրենց կազմից, ձայների պարզ մեծամասնությամբ, ընտրում են ՀԽ նախագահին: ՀԽ-ն կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.1.2. ՀԽ-ի հերթական կազմի լիազորությունների ժամկետ է սահմանվում երկու տարին, որը հաշվարկվում է ՀԽ-ի նոր կազմի ձևավորման՝ սույն կանոնադրության 6.1.6. կետով սահմանված օրվանից: ՀԽ-ի անդամի լիազորությունները, որոնք ստանձնվել են արդեն իսկ ձևավորված ՀԽ-ի կազմում, դադարում են այդ ՀԽ-ի լիազորությունների դադարեցմամբ (ավարտմամբ): Ընդ որում, սույն կանոնադրության՝ նոր խմբագրությամբ հաստատման պահին գործող ՀԽ-ի կազմն իրավազոր է մինչև սույն կանոնադրության 6.1.6. կետով սահմանված ժամկետը ներառյալ: ՀԽ-ի լիազորությունների ժամկետի ավարտից հետո ՀԽ-ն իրավասու է քննարկմամբ որոշումներ ընդունել միայն ՀԽ-ի կազմման հետ կապված հարցերով:

6.1.3. ՀԽ-ն առաջին անգամ կազմավորվում է հիմնադիրների կողմից:

6.1.4. ՀԽ-ի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

6.1.4.1. ՀԽ-ի անդամի գրավոր դիմումի հիման վրա. այս դեպքում լիազորությունները դադարեցված են համարվում դիմումի ներկայացման հաջորդ օրվանից.

6.1.4.2. ՀԽ-ի անդամի պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում¹ ՀԽ-ի մնացած անդամների ձայների առավելագույն երեք քառորդով.

6.1.4.3. լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում, եթե կանոնադրությամբ նման ժամկետ սահմանված է.

6.1.4.4. եթե դադարել են Հիմնադրամի ՀԽ-ի անդամների կեսի կամ կեսից ավելի լիազորությունները.

6.1.4.5. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչելու դեպքում,

¹ Այդ թվում ՀԽ-ի հաստատած ներքին կանոնակարգերով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում:

6.1.4.6. ՀԽ-ի անդամի մահվան դեպքում:

6.1.5. ՀԽ-ի անհատական կազմը հաստատվում է Հիմնադրամի Նոր ՀԽ-ի անհատական կազմի ձևավորման պահին գործող ՀԽ-ի կողմից՝ համաձայն սույն կանոնադրության և ՀԽ-ի հաստատած ներքին կանոնակարգերի:

6.1.6. ՀԽ-ի անհատական կազմի ձևավորման գործընթացում թեկնածուներն ընտրվում և հաստատվում են հետևյալ 3 (երեք) դասային խմբերին համապատասխանելու հիմքով, ընդ որում դասային խմբերի հիման վրա խորհրդի Նոր կազմն իրավագոր է 2019 թվականի դեկտեմբերի 12-ից (ՀԽ-ի Նոր կազմի գործողության սկիզբ):

- 1) ռազմավարական հովանավոր (առավելագույնը ՀԽ-ի 1 անդամի ներգրավվածություն),
- 2) շարունակական հովանավոր (առավելագույնը ՀԽ-ի 4 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ),
- 3) շարունակական հովանավոր (առավելագույնը ՀԽ-ի 2 անդամի ներգրավվածություն):

6.1.7. Եթե ՀԽ-ի անդամի առաջադրված թեկնածուն բավարարում է միաժամանակ մեկից ավելի դասային խմբերին ներկայացվող պահանջներին, ապա կարող է ընտրվել բոլոր այդ դասային խմբերում և առաջադրվել միայն մեկ դասային աստիճանով՝ իր նախընտրությամբ²:

6.1.8. ՀԽ-ի անհատական կազմի ձևավորմանը վերաբերող դրույթները, ինչպես նաև գործունեության կազմակերպման այլ առանձնահատկությունները սահմանվում են ՀԽ-ի հաստատած ներքին կանոնակարգերով՝ մինչև 2019 հոկտեմբերի 1-ը: ՀԽ-ի յուրաքանչյուր անդամ պետք է պատշաճ ձևով ծանոթանա և հաստատի իր ստորագրությամբ, որ ընդունում է կանոնակարգում ամրագրված իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև համաձայն է իր լիազորությունները իրականացնել բացառապես կանոնակարգում և հիմնադրամի կանոնադրությամբ ամրագրված դրույթների շրջանակներում:

6.1.9. ՀԽ-ի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ ՀԽ-ի նախագահի կողմից: ՀԽ-ի նիստերը կարող են հրավիրվել նաև ՀԽ-ի անդամների 1/3-ի պահանջով՝ ՀԽ-ի նախագահի կողմից՝ պահանջի ներկայացմանը հաջորդող 30 օրվա ընթացքում: ՀԽ-ի նիստերը կարող են անցկացվել Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ: Եթե

² Ներդասային ընտրությունների առանձնահատկություններն ու թեկնածուներին ներկայացվող պահանջները սահմանված են Հիմնադրամի ներքին կանոնակարգերով:

նշված ժամկետում ՀԽ-ի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

6.1.10. ՀԽ-ն ընդունում է որոշումներ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: ՀԽ-ի նիստերի կամ որոշումներ ընդունելու քվորումը ապահովված է, եթե նիստին կամ որոշման ընդունմանը մասնակցում է ՀԽ-ի անդամների կեսից ավելին: ՀԽ-ի անդամները կարող են մասնակցել նիստերին կամ որոշումների ընդունմանը անձամբ և հեռահաղորդակցության միջոցներով:

6.1.11. ՀԽ-ի նախագահը և մյուս անդամները չեն համարվում Հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: ՀԽ-ի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են ՀԽ-ի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանվում է ՀԽ-ի կողմից:

6.1.12. ՀԽ-ի նիստերին խորհրդակցական ձայնով և կամ միայն մասնակցության իրավունքով ընտրվող անձանց և/կամ մարմինների հարցի որոշումը վերապահված է բացառապես ՀԽ-ին՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

6.1.13. ՀԽ-ի անդամի ընտրության կարգը թափուր տեղ առաջանալու դեպքում

- 1) ՀԽ-ի անդամի լիազորության դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է ՀԽ-ի գործող կազմի կողմից միևնույն դասային խմբից ոչ ուշ, քան ՀԽ-ի անդամի թափուր տեղ առաջանալու մասին գործադիր տնօրենի ծանուցումը ստանալու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում՝ ՀԽ-ի անդամների ձայների երկու երրորդով:
- 2) ՀԽ-ի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի գործադիր տնօրենը տեղեկացնում է ՀԽ-ի անդամներին առկա թափուր տեղի մասին և կազմակերպում թափուր տեղի համալրումը՝ համաձայն ՀԽ-ի հաստատած ներքին կանոնակարգերի:

6.1.14. ՀԽ-ի նոր կազմի ընտրության կարգը ժամկետի լրանալու կամ բոլոր անդամների լիազորությունների դադարելու դեպքում սահմանվում է ՀԽ-ի հաստատած ներքին կանոնակարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6.2. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

6.2.1. Հիւ-ի նախագահին ընտրում են Հիւ-ի անդամները՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հիւ-ն կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հիւ-ի նախագահն ընտրվում է իրեն ընտրած Հիւ-ի գործունեության ժամկետով:

6.2.2. Հիւ-ի նախագահը՝

6.2.2.1. կազմակերպում է Հիւ-ի աշխատանքները,

6.2.2.2. գումարում է Հիւ-ի նիստերը և նախագահում դրանք,

6.2.2.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:

6.2.3. Հիւ-ի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիւ-ի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

6.2.4. Հիւ-ի նախագահի լիազորությունները կարող են գործունեության սահմանված ժամկետից շուտ դադարեցվել Հիւ-ի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով (երեք քառորդով), եթե կան Հիւ-ի նախագահի կողմից Հիմնադրամի նպատակներին հակասող գործունեության կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման ապացույցներ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6.3. ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

6.3.1. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը նրա գործադիր տնօրենն է, որն ընտրվում և պաշտոնից ազատվում է Հիմնադրամի Հիւ-ի կողմից: Գործադիր տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում են կատարում Հիմնադրամի հիմնադիրները:

6.3.2. Հիմնադրամի գործադիր տնօրենը՝

- 1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ կնքում Հիմնադրամի անունից,
- 2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 3) գործում է առանց լիազորագրի,
- 4) տալիս է լիազորագրեր,
- 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- 6) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- 7) Հիւ-ի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի ռազմավարական ծրագիրը (ծրագրերը), Հիմնադրամի կողմից իրականացման (այդ թվում՝

անձամբ) ենթակա ձեռնարկատիրական գործունեության տեսակների վերաբերյալ առաջարկներ, աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, Հիմնադրամի բյուջեն, տարեկան կտրվածքով Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունները,

- 8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 9) սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,
- 10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- 11) աջակցում է ՀԽ-ի նախագահին ՀԽ-ի աշխատանքներում և ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը:

6.3.3. Գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Հիմնադրամի կանոնադրությամբ և գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է ՀԽ-ի նախագահը կամ ՀԽ-ի լիազորված այլ անձ:

6.3.4. Անձը, որն օրենքի կամ սույն կանոնադրության ուժով հանդես է գալիս Հիմնադրամի անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Հիմնադրամի:

7. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնադրամի ՀԽ-ի իրավասություններն են՝

- 7.1.** Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,
- 7.2.** Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- 7.3.** Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
- 7.4.** Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- 7.5.** Հիմնադրամի ՀԽ-ի նոր անդամների ընտրությունը,
- 7.6.** Հիմնադրամի ՀԽ-ի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

- 7.7. Հն-ի նախագահի, Հիմնադրամի տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
- 7.8. Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը՝ Հն-ի անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ,
- 7.9. Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- 7.10. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,
- 7.11. տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
- 7.12. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
- 7.13. Հիմնադրամի տնօրենի հաշվետվությունների լսումը՝ տարին մեկ անգամ,
- 7.14. իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
- 7.15. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
- 7.16. Հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը,
- 7.17. Հն-ի պատվավոր անդամների կոչումների շնորհումը (պատվավոր անդամի կոչում շնորհվում է այն մարդկանց, ովքեր իրենց գործունեությամբ լրջորեն աջակցել են կամ կարող են աջակցել Հիմնադրամի նպատակի իրականացմանը, կամ որոնց անդամությունն ինքնին կարող է աջակցություն համարվել),
- 7.18. օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմինների չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

8. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հն-ի անդամի իրավասություններն են՝

- 8.1. Հն-ի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- 8.2. Հն-ի քննարկման համար նախատեսվող հարցերի, առաջարկությունների և որոշումների նախագծերի նախապատրաստումը և ներկայացումը,
- 8.3. Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ տեղեկությունների ստացումը,
- 8.4. իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում ստանալը:

Հիս-ի անդամը պարտավոր է՝

8.5. մասնակցել Հիս-ի նիստերին.

8.6. իր պարտականությունների կատարման ընթացքում գործել ելնելով Հիմնադրամի շահերից:

9. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

9.1. Հիս-ի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

9.2. Սույն կանոնադրության 7-րդ կետի 7.4., 7.5., 7.8., 7.9., 7.10. ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունվում են Հիս-ի անդամների ձայների 2/3-ով:

10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

10.1. Հիմնադրամն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում:

10.2. Ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձ չեն ու գործում են Հիմնադրամի Հիս-ի հաստատած կանոնադրությունների հիման վրա:

10.3. Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից և գործում են նրա լիազորագրի հիման վրա:

11. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Հիմնադրամի գույքը Հիմնադրամի սեփականությունն է:

11.2. Հիմնադրամի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

11.3. Հիմնադրամի սեփականության ներքո գտնվող գույքի քանակը և արժեքը չեն սահմանափակվում բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

11.4. Հիմնադրամն իր պարտավորությունների կատարման համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

11.5. Հիմնադրամի նյութական միջոցները ձևավորվում են կամավորության սկզբունքով:

11.6. Միջոցների տրամադրումը Հիմնադրամին ենթակա է Հիմնադրամի ընդունմանը կամ մերժմանը:

11.7. Հիմնադրամն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության

իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում կարող է իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

- 11.8.** Հիմնադրամի սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո, չի կարող բռնագրավվել կամ առգրավվել՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի:
- 11.9.** Հիմնադրի, ինչպես նաև այլ անձանց կողմից Հիմնադրամին որպես սեփականություն հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքը ուղղում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը:
- 11.10.** Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքն է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, որը ձևավորվել է հիմնադիրների համամասնական ներդրման հաշվին:

12. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 12.1.** Հիմնադրամի վերակազմակերպումը՝ միաձուլումը և միացումը, կատարվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հիմնադրամի Հն-ի որոշմամբ:
- 12.2.** Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց փոխանցելու Հիմնադրամի իրավունքները և պարտականություններն այլ անձանց:
- 12.3.** Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:
- 12.4.** Հիմնադրամը կարող է լուծարվել՝
 - 12.4.1. եթե Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
 - 12.4.2. եթե հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին կամ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ,
 - 12.4.3. եթե Հիմնադրամը շեղվել է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներից,
 - 12.4.4. Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,
 - 12.4.5. Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի և կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործողություններ,
 - 12.4.6. Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ: Էական են համարվում այնպիսի խախտումները,

որոնք ի հայտ են եկել Հիմնադրամի գրանցումից հետո և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի մասին» ՀՀ օրենք 36-րդ հոդվածի համաձայն, Հիմնադրամի գրանցման մերժման հիմք է հանդիսանում:

12.4.7. օրենքով նախատեսված այլ դեպքերում:

12.5. Հիմնադրամի լուծարումը կատարվում է ՀՀ «Հիմնադրամների մասին» օրենքով սահմանված լուծարման կարգով: Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

13. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնադրությունը բաղկացած է 14 (տասնչորս) էջից: